ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ
Մ.ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՇԻՐԱԿԻ
ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

Հետազոտական աշխատանք

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ՝ «*Քարտեզների օգտագործումը պատմության դասավանդման ընթացքում*»

Բանդիվանի միջնակարգ դպրոց

Հետազոտող ուսուցիչ՝ *ՎԱԼԵՐ ՍԱՐԳՅԱՆ*

Վերապատրաստող ուսուցիչ՝
պատմ. գիտ. թեկն., դոցենտ- *ԱՐՇԱՎԻՐ ԳԱՍՊԱՐՅԱՆ*

Գյումրի-2023

Բովանդակություն

Ներածություն……...……. 3

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

Քարտեզների օգտագործումը պատմության դասավանդման ընթացքում: Պատմական քարտեզների տեսակները……...……...….5

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Քարտեզագիտական գիտելիքների և հմտությունների ձևավորումը: Քարտեզների օգտագործումը «Երկրորդ աշխարհամարտը» թեմայի դասավանդման ընթացքում.....9

Եզրակացություն ……..……13

Օգտագործվածգրականության ցանկ……..……16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հետազոտական աշխատանքում մենք փորձում ենք ներկայացնել պատմական քարտեզների օգտագործման նշանակությունը պատմության ավելի կոնկրետ՝ «Երկրորդ աշխարհամարտ»-ը թեմայի դասավանդման ընթացքում: Ներկայացնելու ենք, թե ինչ կարևոր նշանակություն ունի ուսուցչի և աշակերտների աշխատանքը քարտեզների հետ, որը նպաստելու է պատմության նկատմամբ աշակերտների ճանաչողական հետաքրքրությունների աճին: Անցկացնելու ենք՝ «Երկրորդ աշխարհամարտ»-ը թեմայով դաս, որը հիմնված է լինելու քարտեզների հետ աշխատանքով:

Թեմայի արդիականությունը: Ակնհայտ է քարտեզների և դրանց օգտագործման նշանակությունը պատմության դասերի ընթացքում: Քարտեզը հնարավորություն է ընձեռում սովորողներին տալ աշխարհագրական հեռանկարի պատկերացում: Պատմական քարտեզները՝ փաստերն ու իրադարձությունները տարածության մեջ տեղայնացնելու հնարավորություն են ստեղծում:

Պատմության դասերին ուսուցիչներն օգտագործում են, թե՛ աշխարհագրական, և թե՛ հատուկ պատմական քարտեզներ՝ նայած ուսումնասիրվող նյութի բնույթին ու բովանդակությանը: «Երկրորդ համաշխարհային պատերազմ» թեման այն եզակի թեմաներից է, որ առանց քարտեզի օգտագործման աշակերտը չի կարող այն ընկալել:

Աշխատանքի *նպատակն է՝* ներկայացնել պատմական քարտեզների օգտագործման նշանակությունը պատմության դասին՝ մասնավորապես «Երկրորդ աշխարհամարտ»-ը թեմայի դասավանդման ընթացքում:

Սույն աշխատանքի խնդիրներն են՝

1. Ուսումնասիրել պատմական քարտեզների դերն ու նշանակությունը պատմության դասավանդման ընթացքում, ներկայացնել քարտեզները՝ որպես գիտելիքների աղբյուր:

2. Ներկայացնել, թե ինչ նշանակություն ունեն քարտեզները «Երկրորդ աշխարհամարտ»-ը թեման ուսումնասիրելու համար՝ դպրոցական դասընթացի ժամանակ:

Ապացուցել, որ պատմական քարտեզների հետ աշխատանքն իր ուրույն տեղն ու դերն ունի պատմության դասավանդման ընթացքում, և նպաստում է սովորողների գիտելիքների ու ճանաչողական մտածողության զարգացմանը:

Ուսումնասիրման առարկան՝ Քարտեզների օգտագործումը «Երկրորդ աշխարհամարտ»-ը թեմայի դասավանդման ընթացքում:

Ուսումնասիրման մեթոդները՝ Աշխատանքը պատրաստելիս օգտագործել ենք համադրման-հակադրման, աղբյուրագիտական վերլուծության մեթոդները:

Գրականության տեսություն՝ Աշխատանքի ժամանակ օգտագործել ենք մասնագիտական հարուստ գրականություն, գիտական ուսումնասիրություններից

հատկապես օգտվել ենք՝ Յու. Կ. Բաբանսկու խմբ. «Մանկավարժություն» աշխատությունից, Հ. Հ. Ղևոնդյանի «Պատմության քարտեզները ուսուցման ժամանակ» և «Պատմության դասավանդման մեթոդիկա» աշխատություններից, Հ. Գ. Պապոյանի «Պատմության դասավանդման մեթոդիկան» դպրոցում, Վ. Վ. Դավիդովի «Բարձրագույն կրթության տեսությունը» աշխատությունից, Մ. Վ.Կորոտկովի և Մ. Տ. Ստուդենիկի «Պատմության դասավանդման մեթոդները, գծագրերում, նկարներում» աշխատությունից:

Աշխատանքի կառուցվածքը: Աշխատանքը բաղկացած է Ներածությունից, երկու գլուխներից, դասի պլանի նմուշից, եզրակացությունից, գրականության ցանկից և հավելվածից:

Ներածության մեջ ներկայացված են թեմայի նպատակն ու խնդիրները, արդիականությունը, գրականության տեսությունը և աշխատանքի կառուցվածքը:

Քարտեզների օգտագործումը պատմության դասավանդման ընթացքում: «Պատմական քարտեզների տեսակները» գլխում ներկայացված են պատմական քարտեզների նշանակությունը պատմության դասավանդման ընթացքում, քարտեզների տեսակները, ուսուցչի և աշակերտների աշխատանքը պատմական քարտեզների հետ:

«**Քարտեզագիտական գիտելիքների և հմտությունների ձևավորումը: Քարտեզների օգտագործումը «Երկրորդ աշխարհամարտը» թեմայի դասավանդման ընթացքում**» վերնագրված երկրորդ գլխում ներկայացված են քարտեզների հետ աշխատանքների հմտությունների ձևավորման կանոնները, քարտեզների վերաբերյալ համապատասխան գիտական գիտելիքների ձևավորման կանոնները: Ներկայացված է նաև ուսուցչի և աշակերտների աշխատանքը քարտեզների հետ:

Եզրակացության մեջ ներկայացված են ուսումնասիրության ընթացքում մեր ունեցած եզրահանգումներն ու կարծիքները:

Հավելվածում զետեղված են օրվա դասի պլան նմուշ օրինակը և այն բոլոր քարտեզները,որոնք ցուցադրվելու են դասապրոցեսի ժամանակ:

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ: ՊԱՏՄԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Դպրոցականների պատմական կրթության տարածապատկերային մտածողության, պատկերացումների առաջացման և զարգացման խնդրում շատ մեծ դեր են կատարում պատմական քարտեզները, քարտեզ-սխեմաները, ատլասները, ուրվագծային քարտեզները, որոնց հիմնական նպատակն է.

1. Բացահայտել աշխարհագրական միջավայրը, որտեղ տեղի են ունեցել ուսումնասիրվող փաստերը:

2. Բացահայտել պատմական երևույթների տարածքային ընդգրկվածությունն ու տևողությունը, որով պայմաններ են ստեղծվում տնտեսական, քաղաքական, ռազմական ու մշակութային կապերի և հակասությունների պարզաբանման համար:

Պատմական քարտեզները ստեղծվում են աշխարհագրական հիմքի վրա և իրենցից ներկայացնում են պատմական ժամանակաշրջանի կամ իրադարձությունների փոքրացված,ընդհանրացված կերպարանշանային պատկերներ, որոնք տրված են որոշակի մասշտաբով հաշվի առնելով իրադարձությունների, երեևույթների տարածականությունը:

Ամենահին քարտեզները ստեղծվել են Բաբելոնում, Եգիպտոսում, Չինաստանում՝ Ք.ա.III-I հազարամյակներում և ծառայել են հիմնականում ռազմական նպատակներով: Առաջին ուսումնական քարտեզները եվրոպական երկրներում կազմվել են XIV-XV, Ռուսաստանում XVIII, հայ իրականության մեջ՝ XIX դարում: Պատմական քարտեզները տարբերվում են աշխարհագրականից: Աշխարհագրական քարտեզների վրա սովորողների համար արդեն սովորական դարձած գույները պատմական քարտեզների վրա ստանում են այլ նշանակություն:

Պատմական քարտեզների մյուս առանձնահատկությունը կայանում է նրանում,որ այստեղ բացահայտվում է իրադարձությունների և երևույթների զարգացման ընթացքը,օրինակ՝ պետությունների առաջացումը, հզորացումը և անկումը և այլն:

Խոսքային և կերպարային միջոցներից բացի, պատմության դասավանդման ընթացքում հսկայական դեր են կատարում պայմանական նշանները: Պայմանական նշանները բնության ու հասարակության վերաբերյալ ընդհանրացված և խոսքի, գծապատկերների միջոցով արտահայտված գիտելիքների կրողներ են: Դրանք լայն կիրառում են գտել հատկապես քարտեզագիտական նյութերում:

Պայմանական նշանները ծառայում են որպես հենարան սովորողների մտավոր գործունեության զարգացման համար: Պատմության դասավանդման ընթացքում

այսպիսի զննականության դերը ուժեղանում է դպրոցականների տարիքային առանձնահատկությունների զարգացման և պատմական պատկերացումների, հասկացությունների ընդլայնման ու ընկալման հետ միասին: Բայց բոլոր դասարաններում խոսքին է պատկանում որոշիչ դերը ոչ միայն պատմական փաստերի, երևույթների, գործընթացների ընդհանրացման, այլև տեղեկատվության հաղորդման գործում:

Մարդկանց տեղաշարժը պատմական քարտեզների վրա ցույց է տրված երկար ընդհատվող,ռազմական հարվածները՝ կարճ կոթավոր սլաքներով, բայց լայն հիմքով, ճակատամարտերի վայրերը՝ խաչվող սրերով կամ հրանոթներով, ապստամբության վայրերը՝ խոշոր կետերով և այլն:

Պատմական քարտեզները տարբերվում են տարածքների ընդգրկվածությամբ, բովանդակությամբ, մասշտաբով, և բաժանվում են երեք խմբի՝ ընդհանրացնող, թեմատիկ և քարտեզագծանկարային:

Ընդհանրացնող կամ ընդհանուր քարտեզները ընդգրկում են պատմական որոշակի ժամանակաշրջան և տարածքներ՝ կատարած համապատասխան իրադարձություններով, երևույթներով ու գործընթացներով: Օրինակ՝ «Անգլիական կայսրությունը XVII-XIX դարերում»: Ընդհանրացնող քարտեզներին լրացնում են թեմատիկ քարտեզները,որոնք պարունակում են ուսումնական նյութերին նվիրված իրադարձություններն ու երեևույթները: Նրանք ընդգրկում են նաև առանձին իրադարձություններ կամ պատմական գործընթացների որոշակի կողմեր: Թեմատիկ քարտեզներ են «Հիտլերի արշավանքը Ռուսաստան», «Օտտո ֆոն Բիսմարկի կայսրության ստեղծումը» և այլն:

Քարտեզագծանկարային կամ սխեմատիկ.դրանք այն քարտեզներն են, որոնք պատկերում են մեկ որոշակի իրադարձություն: Օրինակ՝ «Սմոլենսկի կամ Ստալինգրադի ճակատամարտերը» և այլն:

Պատմական իրադարձությունների տեղայնացումը քարտեզների վրա: Պատմական իրադարձությունները տեղի են ունենում որոշակի ժամանակի և տարածության մեջ: Պատմության մեջ տարածաժամանակային կապերը արտահայտվում են փաստերի հաստատմամբ, որ այսինչ իրադարձությունները տեղ են գտել նույն ժամանակահատվածում, բայց տարբեր վայրերում:

Որոշակի աշխարհագրական միջավայրում տեղի ունեցող իրադարձությունները կոչվում են տեղային: Օրինակ՝ գետերի նշանակությունը Եգիպտոսում, Միջագետքում՝ որպես հաղորդակցության ճանապարհների, հասկանալի են դառնում սովորողներին, երբ նրանց բացատրվում է, որ այդ տարածքների մի մասը անտառային էր, մի մասը լեռնային և այլն:

Ուրվագծային միջոցները օգտագործվում են որպես պատմական գիտելիքների աղբյուր և որպես դրանց համակարգման միջոց:

Առաջին պատկերացումները քարտեզների վերաբերյալ սովորողները ստանում են «Հայրենագիտություն» առարկայից, որը ուսումնասիրվում է V դասարանում: Նրանք պատկերացում ունեն, որ քարտեզների վրա հորիզոնական դիրքով, պայմանական տեսքով պատկերված է տեղանքը որոշակի մասշտաբով: Սովորողները ծանոթ են գետերի, ծովերի, լեռների, դաշտավայրերի պայմանական նշաններին և դրանց անդրադառնում են անհրաժեշտության դեպքում: Նրանք կարող են ցույց տալ բնակավայրերը, պետությունների սահմանները և այլն:

Միջին դպրոցում հենց առաջին ժամերից ուսուցիչը պետք է զարգացնի սովորողների քարտեզագիտական հմտություններն ու ընդունակությունները: Նրանք պետք է կարողանան ազատ կերպով օգտվել պայմանական նշաններից և կողմնորոշվել քարտեզների վրա:

Պատմական և քարտեզագիտական գիտելիքները գտնվում են ամուր փոխհարաբերությունների մեջ: Դրա համար էլ պատմական քարտեզից օգտվելու հմտությունները ինքնանպատակ չեն, այլ միջոց՝ ավելի գիտակցված ընկալելու պատմական իրադարձություններն ու երեևույթները: Դրան նպաստում են պատմական քարտեզների մշակման փակցված լինելը պատմության կաբինետում:

Դասի ընթացքում ուսուցչի խոսքը պարտադիր պետք է ուղեկցվի քարտեզի ցուցադրումով, որը նպաստում է սովորողների մոտ ճանաչողական հմտությունների, ինքնուրույն և պատկերային մտածողության զարգացմանը:

Նոր քարտեզին անցնելու դեպքում ուսուցիչը անպայման պետք է շեշտի, թե այն ինչպիսի տարածքներ և պատմական ժամանակշրջան է ընդգրկում՝ նշելով այնտեղ եղած կարևորագույն անուններն ու բացատրում պայմանական նշաններն: Ուսուցիչը ցուցադրում է աշխարհագրական հորիզոնականները, ռազմական գործողությունները, կարևորագույն վայրերը, բացահայտում տվյալ շրջանի սահմանների առանձնահատկությունները:

Մի քարտեզից մյուսին անցման ժամանակ ուսուցիչը պարտադիր կարգով պետք է ապահովի դրանց հաջորդականությունը: Եթե քարտեզի վրա նշված են տարբեր շրջաններ, դրանք բացատրվում են տարածական փոխհարաբերություններով:Սրան օգնում են ընդհանրացնող քարտեզները ընգրկելով երկու տարածաշրջաններն էլ: Այս ամենից հետո բացահայտվում են քարտեզների միջև եղած ժամանակագրական կապերը, պատմական իրադարձությունների տարաժամանակյա և համաժանակյա լինելը, որոք արտացոլված են քարտեզի վրա:

Մեկ դասի ընթացքում կարելի է կիրառել մի քանի քարտեզներ, բայց ոչ ավելի, քան երեքը, քանի որ այդ դեպքում սովորողները կշփոթեն աշխարհագրական տարածքները, պատմական գործընթացները, երևույթներն ու իրադարձությունները: Օրինակ՝ «Երկրորդ համաշխարհային պատերազմը 1939-1945թթ.» և «Հայրենական Մեծ պատերազմը 1941-1945թթ.», քարտեզների միաժամանակյա կիրառումը նպաստում է սովորողների կողմնորոշմանը տարածության և ժամանակի մեջ:

Որպեսզի սովորողների մոտ ստեղծվի ուսումնասիրվող երկրի կամ տարածքի վերաբերյալ տարածական պատկերացում, և պարզ պատկերացնեն նրա տեղը, այն սկզբում պետք է ցուցադրել աշխարհի քաղաքական քարտեզի վրա: Որպեսզի ուսուցիչը կարողանա կողմնորոշել աշակերտներին պատմական իրադարձությունների և երևույթների ընկալման խնդրում, կատարում է հետևյալը. ֆիզիկական քարտեզի վրա ցուցադրում է այն տարածքները, որոնք անցան Գերմանիային 1939-1941թթ. ռազմական գործողությունների ընթացքում, ապա անցնում է պատմական քարտեզի ցուցադրմանն ու բացատրմանը:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ՔԱՐՏԵԶԱԳԻՏԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԵՎ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ:
ՔԱՐՏԵԶՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ
<<ԵՐԿՐՈՐԴ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԸ>>
ԹԵՄԱՅԻ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ:

Ժամանակակից քարտեզագրությունը ներառում է՝

1. *գիտության տեսական հիմունքները*
2. *քարտեզագրական գիտության և արտադրության պատմությունը,*
3. *քարտեզագրական աղբյուրագիտությունը,*
4. *քարտեզների նախագծման և կազմման տեխնոլոգիան և տեսությունը,*
5. *քարտեզների օգտագործման տեսությունը և մեթոդները:*

Միջին դպրոցում ուսուցիչը թարմացնում է աշակերտների գիտելիքները մասշտաբի վերաբերյալ, ապա անցնում նոր հմտությունների ձևավորմանը: Մասշտաբի վերաբերյալ գիտելիքները յուրացնելու համար նպատակահարմար է սովորողների տալ հատուկ առաջադրանքներ, օրինակ ՝ ցուցադրել միևնույն առարկան կամ վայրը տարբեր տեսակի քարտեզների վրա:

Եթե դպրոցում չկա ուսուցանվող նյութին համապատասխան քարտեզ, ապա չի կարելի այն փոխարինել պատմական այլ ժամանակաշրջանի վերաբերյալ քարտեզով, քանի որ սովորողների մոտ կձևավորվի պատմական սխալ պատկերացումներ տվյալ տարածքների վերաբերյալ:

Պատմական քարտեզի հետ աշխատելիս անհրաժեշտ է պահպանել հետևալ կանոնները: Ցուցադրումից առաջ ուսուցիչը բանավոր ներկայացնում է տվյալ աշխարհագրական վայրը և շեշտում, որ այն գտնվում է այսինչ վայրից հյուսիս, հարավ, արևելք կամ արևմուտք: Օրինակ ՝ Գերմանիան գտնվում է Կենտրոնական Եվրոպայում, ընդհանուր սահման ունենալով հյուսիսում՝ Դանիայի (68կմ), արևմուտքում՝ Նիդերլանդների (577 կմ), Բելգիայի (167 կմ) և այլն:

Սահմանների ներկայացման ժամանակ տրվում են ոչ միայն ֆիզիկաաշխարհագրական կողմնորոշիչները, այլև հարևան երկրներն ու ժողովուրդները: Սովորողը այն ժամանակ կարող է հեշտությամբ ցուցադրել տվյալ պատմաաշխարհագրական վայրը, երբ նա կարողանա հանգիստ կողմնորոշվել քարտեզի վրա:

Սովորողների ուշադրությունը կենտրոնացնելու նպատակով ուսուցիչը ասում է. «Նայե՛ք քարտեզին», «Ուշադրությու՛ն ցույց եմ տալիս»: Բանավոր նշելով տվյալ առարկայի տեղը և ցուցադրելով այն քարտեզի վրա՝ ուսուցիչը բարդ անվանումները

գրում է գրատախտակին, իսկ դպրոցականները այդ վայրը գտնում են դասագրքի քարտեզների կամ ատլասների վրա:

Դասավանդման մեթոդիկան ենթադրում է պատի և սեղանի քարտեզների հետ համաժամանկյա աշխատանք: Այնուհետև բանավոր նկարագրությամբ սեղանի քարտեզի վրա գտնում են տվյալ օբյեկտը կամ առարկան, ապա այն գտնում են պատի քարտեզի վրա: Հանձնարարությունները կատարում են սեղանի քարտեզի վրա, բայց դրա հաշվետվությունը արվում է պատի քարտեզի վրա: Աստիճանաբար սովորողները տիրապետում են պատմական քարտեզներ կարդալուն, պայմանական նշաններում տեսնում հասարակական կյանքի համար կարևորագույն երեևույթներ, գտնում համեմատության եզրեր: Քարտեզի դերը՝ որպես պատմական գիտելիքի, հատկապես մեծանում է ավագ դպրոցականների հետ աշխատանքի ժամանակ:

Պատմական քարտեզների հետ աշխատանքում սովորողները ձեռք են բերում հետևյալ գիտելիքներն ու հմտությունները.

1. Իմանալ, որ քարտեզի անվանումը ցույց է տալիս թեման և նրա հիմնական բովանդակությունը, որ պատմական քարտեզը ընդգրկում է մարդկային անցյալի որոշակի ժամանակաշրջան, նրա վրա կարող են պատկերված լինել տարբեր ժամանակաշրջանների վերաբերյալ իրադարձություններ, քարտեզները ունեն մասշտաբ, պայմանական նշաններ, որոնք ներկայացված են քարտեզների ներքևի մասերում:

2. Կարողանալ ճանաչել և անվանել քարտեզի վրա ներկայացված աշխարհագրական տարածությունը, որոշել հաջորդականությունն ու ժամանակը, քարտեզի վրա պատկերված իրադարձությունը, ճիշտ կարդալ և բանավոր ներկայացնել քարտեզի վրա պատկերված իրականությունը, քարտեզի վրա գտնել և անվանել պայմանական նշանները: Գտնել ոչ մեծ և այլ բնույթի քարտեզների վրա պահանջվող տարածքները, համեմատել քարտեզների վրա ներկայացված տարածքների հեռավորությունը:

Քարտեզ սխեմաներ: Նրանք օգնում են բացահայտել ուսումնասիրվող իրադարձությունների և երևույթների միջև եղած ներքին կապերը: Դրանք ֆիզիկաաշխարհագրական հիմքի վրա ստեղծված քարտեզներն են, որոնք վերարտադրում են մանրամասնորեն, ամրապնդված և ընդհանրացված տեսքով ինչ որ մեկ իրադարձություն կամ երևույթ. Օրինակ՝ «Մոսկվայի համար ճակատամարտը», «Ստալինգրադի ճակատամարտը» և այլ քարտեզ-սխեմաներ:

«Երկրորդ համաշխարհային պատերազմ» թեման գրագետ և ճիշտ մատուցելու համար այս տեսակի քարտեզների օգտագործումը պարտադիր է ցանկացած ուսուցչի համար որոնք ցանկանում են որ իրենց ասածը և արածը տեղ հասնի և յուրացվի աշակերտի կողմից: Այսպիսով թեմայի ամեն մի հատված ներկայացնել օգտագործելով տվյալ ժամանակահատվածում տեղի ունեցած կարևորագույն ճակատամարտերի քարտեզները, զուգահեռ չմոռանալով բանավոր գրագետ

մեկնաբանությունը: Նյութը ներկայացնել աշակերտներին ներգրավելով դասապրոցեսին, այստեղ աշխատանքը հեշտացնելու համար նախորոք դասարանին բաժանել ատլասներ, որոնց օգնությամբ նրանք զուգահեռ կհետևեն ուսուցչի մեկնաբանմանը:

Ուրվագծային քարտեզներ: Այս տիպի քարտեզները հնարավորություն են տալիս յուրացնելու և ամրապնդելու գիտելիքները,մշակելու պատմական քարտեզների հետ աշխատելու նոր հմտություններ և ունակություններ, զարգացնելու սովորողների պատկերացումներն ու տրամաբանական մտածողությունը:

Ուրվագծային քարտեզները պատմության ուսուցման գործնական, կարևոր միջոցներից են, որոնք նպաստում են սովորողների ինքնուրույն ճանաչողական ունակությունների զարգացմանն ու կատարելագործմանը:

Ուրվագծային քարտեզները օգտագործվում են.

1*. Դասի ժամանակ նոր նյութի ամրապնդման նպատակով.*

2. Նախորդ դասերին ուսումնասիրած նյութերի մշակման համար՝ օգտագործելով տեղեկատվական գրականություն,

3. Պատմաաշխարհագրական գիտելիքների ստուգման:

Մեկ ուրվագծային քարտեզը կարելի է օգտագործել մի քանի դասերի ուսումնասիրության ընթացքում: Նման դեպքերում գնահատվում է սովորողի աշխատանքի յուրաքանչյուր փուլ:

Բացի վերը նշված քարտեզների օգտագործումից Երկրորդ աշխարհամարտի մատուցումը կարելի է մատուցել ուսուցչի կողմից գրատախտակին գծվող կավճային գունավոր ուրվագծային քարտեզները: Օրինակ՝ կարելի է ներկայացնել գեն. Ռոմմելի կողմից 1942թ. Սան Մարկո կարևոր հենակետի գրավումը որով ճանապարհ բացվեց դեպի Եգիպտոս: Այսպիսի քարտեզները պայմանականորեն անվանում ենք ուրվագծային բլից քարտեզներ: Շատ ուսուցիչներ գործնականում հաջողությամբ օգտագործում են ուրվագծային բլից քարտեզներ, որոնք կիրառվում են նաև գիտելիքների հաղորդման, ամրապնդման, ստուգման և կրկնությունների ժամանակ:

Պատմության դասընթացի բովանդակության ակտիվ յուրացումը կախված է ուսուցչից, նրա պատրաստվածության աստիճանից, ուսուցման կազմակերպման ձևերից ու մեթոդների, ինչպես նաև ուսուցման գործընթացում ուսուցչի ու սովորողների ակտիվ փոխահարաբերություններից: Մեթոդական եղանակները գործունեության ձևեր են, որոնք ուղղված են որոշակի խնդիրների լուծմանը: Դրանք սովորողների աշխատանքի ձևեր են: Սովորողները կատարելով դրանք, հասնում են որոշակի արդյունքների: Սովորողների կողմից քարտեզների հետ աշխատանքը նպաստում է պատմության նկատմամբ հետաքրքրությունների ձևավորմանն ու աճին: Պարզ է դառնում, որ քարտեզների ընդգրկումը պատմության դասին հնարավորություն է տալիս նրանց զգալու ժամանակի և տարածության ոգին: Այսպիսով Երկրորդ աշխարհամարտը այն նյութն է, որը առանց քարտեզների

օգտագործման աշակերտները չեն կարող ամբողջական պատկերացնեն աշխարհամարտի,գլխավոր ճակատամարտերի տեղի և գործողության ողջ ծավալին: Յուրաքանչյուր նոր դասի մատուցում կատարվում է համառոտ նախաբանի ներկայացմամբ, այնուհետև քայլ առ քայլ ներկայացվում է պատերազմի սկսման պատճառների լուսաբանմամբ, ինչպես նաև քարտեզի միջոցով ցույց է տալիս Եվրոպան 1939թ.-ին (նկ.1) սկսելով բուն պատերազմի մասին ինֆորմացիայի մատուցմամբ, ուսուցիչը իրեն որպես օգնական սկսում է քարտեզի միջոցով և գրագետ խոսքով ներկայացնել աշխարհամարտի բոլոր փուլերը, աառաջին քայլում նա ներկայացնում է Գերմանիայի կոցմից նշանավոր ռազմական գործողությունների քարտեզները, որպեսզի աշակերտների մոտ ավելի հստակ ձևավորվի գործողության տարածականությունը,արևմտյան ուղղությամբ գերմանական զորքերի փայլուն ռազմարշավից էր Ֆրանսիայի նվաճման օպերացիան (նկ. 3):

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ասպիսով ի մի բերելով կատարված հետազոտության արդյունքները կարող ենք եզրակացնել՝

- Սովորողների կողմից քարտեզների հետ աշխատանքը նպաստում է պատմության նկատմամբ հետաքրքրությունների ձևավորմանն ու աճին: Պարզ է դառնում,որ քարտեզների օգտագործումը պատմության դասին հնարավորություն է տալիս նրանց զգալու ժամանակի և տարածության ոգին:
- Ուսումնասիրելով քարտեզների դերը պատմության դասին, կարող ենք նշել, որ քարտեզի հետ աշխատանքը ակտիվացնում է սովորողների մտածողությունը ու տարածական պատկերացումները, նպաստում պատմական գիտելիքների ավելի արդյունավետ յուրացմանը:
- Պատմական և քարտեզագիտական գիտելիքները գտնվում են ամուր փոխհարաբերությունների մեջ: Դրա համար էլ պատմական քարտեզներից օգտվելու հմտությունները ինքնանպատակ չեն,այլ միջոց ավելի գիտակցված ընկալելու պատմական իրադարձություններն ու երևույթները:
- Ներկայացնելով քարտեզների դերը «Երկրորդ աշխարահամարտ»-ը թեման ուսումնասիրելու ժամանակ եկանք այն եզրակացությանը, որ այս թեման անհրաժեշտ է անցկացնել քարտեզների օգտագործմամբ:
- Դասի ընթացքում ուսուցչի խոսքը պարտադիր պետք է ուղեկցվի քարտեզի ցուցադրումով, որը նպաստում է սովորողների մոտ ճանաչողական հմտությունների, ինքնուրույն և պատկերային մտածողության զարգացմանը:
- Պետք է հիշել,որ քարտեզներն ապահովում են պատմական երևույթների իրադարձությունների մասին գիտելիքների աղբյուր:
- Ասպիսով կարող ենք եզրակացնել, որ քարտեզները պատմական ցանկացած թեմա ուսումնասիրելու համար ունեն շատ կարևոր նշանակություն, հատկապես «Երկրորդ աշխարահամարտ»-ը թեման ուսումնասիրելու համար, քանի որ նման մեծ թեմա առանց քարտեզների գրեթե անհնար է պատկերացում կազմել ռազմական ծրագրերի,ստրատեգիական ուղղությունների և ընդհանրապես պատերազմի ընթացքի և ավարտի մասին:

ՀԱՎԵԼՎԱԾ 1

ՕՐՎԱ ԴԱՍԻ ՊԼԱՆԻ ՆՄՈՒՇ ՕՐԻՆԱԿ

Դասարան՝11-րդ
Առարկա՝ Համաշխարհային պատմություն
Ամիս ամսաթիվ՝
Դասի թեման՝ Երկրորդ համաշխարհային պատերազմ
Դասի նպատակ՝
ա)**Ակադեմիական**

1. Իմանալ,թե երբ և որ իրադարձությամբ սկսվեց Երկրորդ աշխարհամարտը:
2. Իմանալ, թե երբ հիտլերյան Գերմանիան հարձակվեց Ֆրանսիայի վրա:
3. Իմանալ, թե երբ է Գերմանիան հարձակվել ԽՍՀՄ-ի վրա:
4. Իմանալ, թե երբ է ձևավորվել հակահիտլերյան կոալիցիան,ինչու հնարավոր եղավ գաղափարաքաղաքական մինչ այդ հակամարտ երկրները՝ ԽՍՀՄ, ԱՄՆ, Մեծ Բրիտանիան միավորվել մեկ խմբավորման մեջ :
5. Իմանալ, թե երբ և որ ճակատամարտերի շնորհիվ տեղի ունեցավ արմատական բեկում Երկրորդ աշխարհամարտի ընթացքում՝ հօգուտ հակահիտլերյան միության:

բ) **Սոցիալական**

1. Ձեռք բերել շփման հմտություններ լսելու, քննարկելու, ընդհանուր եզրակացություններ անելու, դիմացինի կարծիքը հաշվի առնելու:
2. Ստեղծել դրական փոխկապակցված մթնոլորտ

գ) **Կիրառական**

- Կառուցողական մտածողության ձևավորում

դ) **Զարգացնող**

- Միջառարկայական կապերի ստեղծում

ե) **Դաստիրարակչական**

Պատերազմը ապացուցեց, որ նման կարգի ռազմական բախումը սպառնալիք է մարդկության գոյությանը, նրա ստեղծած քաղաքակրթական արժեքներին: Եվ սա պետք է դաս լինի միջազգային հանրությանը, որպեսզի սրանից հետո որևէ գլոբալ հարց չստանա ասպիսի լուծում:

Անհրաժեշտ պարագաներ՝ դասագիրք, գրատախտակ,պաստառներ, քարտեզներ, գրիչներ:

Ցուցադրական նյութեր՝ «Բարբարոսա» պլան, «Ստալինգրադի ճակատամարտ», քարտեզներ:

Հիմնական հասկացություններ՝ Երկրորդ համաշխարհային պատերազմ,Ադոլֆ Հիտլեր, Ստալին, Չերչիլ, Հայրենական Մեծ պատերազմ Ֆրանկլին Ռուզվելտ, Կուրսկի ճակատամարտ, Թեհրանի կոնֆերանս, Հերոսիմա, Նագասակի:

Միջառարկայական կապեր՝ Հայոց պատմություն, աշխարհագրություն, ռազմագիտություն:

Մեթոդներ՝ մտագրոհ, հարցախույզ, ներածական դասախոսություն, համեմատական:

Դասի տիպը՝ համագործակցային, ամփոփիչ:

Դասի ընթացքը

Խթանման փուլ՝ կազմակերպչական մաս՝ 3 րոպե

Մտագրոհ «Պատերազմ» բառի շուրջ, կատարել հասկացությունների քարտեզագրում:

Ներկայացնել դասի նպատակը համառոտ դասախոսությամբ՝ 7 րոպե

Իմաստի ընկալման փուլ ՝աշխատանք զույգերով, հիմնախնդիրների շուրջ քննարկման կազմակերպում,գործնական աշխատանք քարտեզով 20րոպե

Քննարկման հարցեր՝

1. Ներկայացնել հիտլերյան Գերմանիայի կողմից Ֆրանսիայի նվաճումը:

Քարտեզի միջոցով ներկայացնել այդ պլանը

2. Ինչու՞ Խորհրդային Միությանը հիտլերյան Գերմանիայի պարտադրած պատերազմը պատմության մեջ կոչվեց Հայրենական Մեծ պատերազմ:

3. Ի՞նչ բովանդակություն ուներ «Բարբարոսա» պլանը:

Քարտեզի միջոցով ներկայացնել այդ պլանը

4. Ներկայացնել Ստալինգրադի և Կուրսկի ճակատամարտերը:

Քարտեզի միջոցով ներկայացնել այդ պլանը

5.Ե՞րբ տեղի ունեցավ Պոտսդամի խորհրդաժողովը և ի՞նչ հարցեր քննարկվեցին խորհրդաժողովում:Ինչո՞վ էր այն տարբերվում նախորդ խորհրդաժողովներից:

Կշռադատման փուլ 9 րոպե

Դասը սովորելուց և հարցերին պատասխանելուց հետո, ամփոփել համագործակցային աշխատանքի արդյունքում կատարված աշխատանքը:

Գնահատում և անդրադարձ՝ 5 րոպե

Գնահատվում են ըստ

- Պատասխանների հիմնավորվածության,
- Կարևոր հիմնախնդիրների առանձնացման /գլխավորը երկրորդականից տարանջատելու կարողություն /
- Համագործակցության ընթացքում դրական վարքագծի դրսևորման հատկանիշներով:

Տնային առաջադրանք՝ 1 րոպե

- Սովորել դասը պատմել, գրավոր պատասխանել դասի հարցերին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Մենագրություններ և ուսումնասիրություններ

1. Բաբանսկի Յու.Կ. Մանկավարժություն, հատոր 1, Երևան, 1986, էջ 455:
2. Ղևոնդյան Հ . Հ ., Պատմության դասավանդման մեթոդիկա,Երևան ,2001, 250 էջ:
3. Պապոյան Հ . Գ., Զոհրաբյան Է. Ա., Պատմության դասավանդման մեթոդիկան դպրոցում,Երևան, 2013:
4. Давидов В. В. Теория развивающего обучения, Москва,1996, 554 с.
5. Коротков М. В., Студеникин М.Т., Методика обучения истории в схемах,таблицах,описаниях,Москва,1999, 192 с

Հոդվածներ

6. Ղևոնդյան Հ.Հ., Պատմության քարտեզները ուսուցման ժամանակ, «Սովետական մանկավարժ.», Երևան, 1983 N 8, էջ 60-63:

Համացանցային աղբյուրներ

7.Սիմոնյան Գ., Քարտեզների օգտագործումը պատմության դասին https://forum.armedu.am/archive/index.php /t-1442.html

8.Քարտեզագրություն –https://hy.wikipedia.org/wiki/

ՀԱՎԵԼՎԱԾ 2



Ընդհանուր քարտեզ՝ Եվրոպան 1939թ. դրությամբ: Նկ. 1



Թեմատիկ քարտեզ՝ Պլան «Բարբարոսա»: Նկ. 2



Սխեմատիկ քարտեզ Ֆրանսիայի նվաճումը1940թ Նկ՝ 3:



Սխեմատիկ քարտեզ՝ «Թայֆուն օպերացիա»՝ Մոսկվայի ճակատամարտ: Նկ. 4



Սխեմատիկ քարտեզ՝ Ստալինգրադի ճակատամարտ: Նկ.5